

ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՎ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

PERSONAL AND LITERARY RELATIONS BETWEEN HAMASTEGH AND ARSHAK CHOBANYAN

ЛИЧНЫЕ И ЛИТЕРАТУРНЫЕ СВЯЗИ АМАСТЕХА И АРШАКА ЧОПАНЯНА

Մարգարիտա Խաչատրյան

Margarita Khachatryan

Маргарита Хачатрян

Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
The Institute of Literature after M. Abeghyan, National Academy of Sciences, Armenia
Институт литературы имени М. Абегаына, Национальная академия наук, Армения

margaritakhachatryan@litinst.sci.am

Ներկայացվել է՝ 10.09.2024; գրախոսվել է՝ 14.10.2025; ընդունվել է՝ 14.04.2026

Received: 10.09.2024; Revised: 14.10.2025; Accepted: 14.04.2026

Представлено: 10.09.2024; рецензировано: 14.10.2025; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով

© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence

© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-116

Ամփոփում – Համաստեղը (Համբարձում Կելենյան, 1895–1966) Սփյուռքի հայ գրականության նշանավոր դեմքերից է: 1924-ին Բոստոնում լույս տեսավ նրա պատմվածքների «Գյուղը» ժողովածուն, որին առաջիններից մեկն անդրադարձավ գրող, խմբագիր, թարգմանիչ Արշակ Չոպանյանը (1872–1954): 1913-ին Համբարձում Կելենյանը ժամանեց Նյու Յորք՝ կամենալով ուսումը շարունակել ամերիկյան համալսարանում, բայց կիսատ թողեց ու մեկնեց Բոստոն, որտեղ հրատարակվող «Հայրենիք» օրաթերթի, հետագայում նաև նույնանուն հանդեսի խմբագրատունը դարձավ ընկերների հետ նրա ամենօրյա հանդիպումների ժամադրավայր, Բնօրրանի կարոտի ցավը մեղմելու միջոց: «Գյուղը» ժողովածուն *Համաստեղ* գրչանունով հայ մարդու առջև բացեց նոր հեռանկարներ, իսկ երկարատև ճանապարհորդությունը դեպի Ֆրանսիա և Մերձավոր Արևելք օգնեց ճանաչել ու հասկանալ Հայ սփյուռքը, սփյուռքահայությանը հուզող խնդիրները: Այդ ճանապարհորդության ընթացքում գրողը հանդիպեց հայ մշակույթի բազմաթիվ նշանավոր դեմքերի, որոնցից մեկն էլ Արշակ Չոպանյանն էր: Նրանց միավորում էին հայության ստեղծած հոգևոր ու նյութական արժեքների խոր իմացությունը, ինչպես նաև նոր ժամանակների, նոր պայմանների առաջադրած համազգային հիմնախնդիրների հետ կապված մտահոգությունները: Նամակագրության պահպանված էջերը, թեկուզ համառոտ, ուշագրավ տեղեկություններ են տալիս 1930-ական թվականների հայ գրականության թեմատիկ որոնումների մասին: Այդ նամակները ներկայացնում են նաև հեղինակների գրական հե-

տաքրքրությունները, պատմում նրանց ստեղծագործական ծրագրերի մասին: Իսկ դրանում արձարժված որոշ ազգային խնդիրներ, ցավոք, այժմեական են նաև մեր օրերում:

Abstract – Hamastegh (Hambartzum Kelenyan, 1895–1966) is one of the prominent figures in Armenian literature in the Diaspora. In 1924, his collection of short stories "The Village" was published in Boston, and was one of the first to be reviewed by writer, editor, and translator Arshak Chopanyan (1872–1954). In 1913, Hambardzum Kelenyan crossed the ocean and at first appeared in New York, tried to continue his education at an American University but dropped out. Then he appeared in Boston, where the editorial office of "Hayrenik" daily newspaper, later reformed to a journal, became a meeting place for daily meetings with friends and a way to mitigate the pain of homesickness. The collection of stories "The Village" published in 1924 opened up new perspectives for him as an Armenian under the pen name *Hamastegh*, as well as the long journey to France and the Middle East helped to recognize the Armenian Diaspora and understand the problems of concern for Armenians in Diaspora. During that trip, Hamastegh met many prominent people of Armenian culture. Hamastegh and Arshak Chopanyan were united by a deep understanding of the spiritual and material values created by the Armenian people, as well as concern for the nationwide problems posed by new times and new conditions. The preserved pages of their correspondence, though briefly, provide interesting information not only about their relationship, but also about the thematic searches of Armenian literature in the 30s of the last century. Unfortunately, some of the national problems that concerned them, are still relevant today.

Аннотация – Амастег (Амбарцум Келенян, 1895–1966) является одним из известных представителей армянской литературы Диаспоры. В 1913 г. Амбарцум Келенян отправился в Нью-Йорк с намерением продолжить учебу в одном из американских университетов, однако его планы изменились, и он переехал в Бостон, где редакция ежедневной газеты «Айреник», а впоследствии и одноименного журнала стала местом встреч с друзьями, с которыми его объединяла ностальгия по Родине. В 1924 г. в Бостоне вышел в свет сборник рассказов Амастега «Деревня», и одним из первых на него откликнулся писатель, редактор и переводчик Аршак Чопанян (1872–1954). Сборник «Деревня», изданный под псевдонимом *Амастег*, открыл перед ним новые жизненные перспективы, а долгое путешествие по странам Европы и Ближнего Востока способствовало ознакомлению с проблемами Диаспоры и насущными для нее вопросами. Во время этой поездки Амастег встречался со многими деятелями армянской культуры, одним из которых был Аршак Чопанян. Их объединяла обеспокоенность судьбами армян, в силу исторических обстоятельств оказавшихся вдали от Родины. Дошедшая до нас переписка Амастега с А. Чопаняном проливает свет на многие вопросы, касающиеся армянской литературы, в частности, тематических поисков литературы 1930-х годов, однако ряд национальных вопросов, обсуждавшихся в этих письмах, к сожалению, актуальны по сей день.

Հիմնարաներ – «Գյուղը», «Անձրև», նամակներ, Սփյուռք, գաղթօջախներ:

Keywords – "The village", "Rain", letters, Diaspora, communities.

Ключевые слова – «Деревня», «Дождь», письма, Диаспора, общины.

Ներածություն

Համաստեղն ընկերոջ՝ գեղանկարիչ, բանաստեղծ, դրամատուրգ Եղիա Գասպարյանի (1893–1948) հետ 1928 թ. հուլիսի 28-ից մինչև 1930 թ. հունիսի 12-ը ճանապարհորդում էր Եվրոպայում, Մերձավոր Արևելքի երկրներում:

Եվրոպական և Մերձավոր Արևելքի մի քանի երկրներում շրջագայելուց հետո Համաստեղն արձանագրեց Սփյուռքի հայության մեծ նահանջն ազգային ինքնությունից, օտարության մեջ ապրող հայությանը խորհելու լրացուցիչ առիթ տալու նպատակով դիմեց գրական տարբեր ժանրերի՝ երգիծական պոեմ («Այ-ծետոմար»), քնարական շքեղ էջեր («Աղոթարան»), դրամատիկական փոքրածավալ ու մեծածավալ երկեր («Քրիստոսի երկրորդ գալուստը», «Հայաստանի լեռներու սրնգահարը»), դյուցազնավեպ (երկհատոր «Սպիտակ Ձիավորը») և այլն:

Փարիզում Համաստեղին հյուրընկալողներից մեկն էր նաև գրող, քննադատ, հասարակական գործիչ Արշակ Չոպանյանը:

Համաստեղի յոթ նամակները և յոթ կարճ գրությունները, Արշակ Չոպանյանի երկու պատասխան նամակները (տե՛ս Համաստեղ 2003, 291–295 և 479–481) ընդգրկում են 1928 թ. օգոստոսի 6-ից մինչև 1930 թ. մայիսի 31-ը ժամանակահատվածը և ներկայացնում են հեղինակների գրական հետաքրքրությունները, պատմում են նրանց ստեղծագործական ծրագրերի մասին: «Ամերիկայէն կը գրեմ նամակ» (Համաստեղ 2003, 481). այս խոստումով է ավարտվում Համաստեղի պահպանված վերջին գրությունը:

Գրական առաջին «ծանոթությունը»

1924-ին Արշակ Չոպանյանի՝ Փարիզում հրատարակած «Դեմքեր» հոդվածների ժողովածուի առնչությամբ Համաստեղը 1924 թ. նոյեմբերի 7-ի նամակում գրում է, որ «Գյուղը» ժողովածուի մասին նրա հեղինակավոր խոսքը պատճառ պիտի լինի, որ «գործս ասելի լրջացնեմ ու միևնոյն ոճով հետապնդեմ նոր գեղեցկութիւններ, եթէ միայն Ամերիկայի այս մեքենաներու խառնիճաղանճը իր մէջ չխեղդէ ըսելիքներս» (Համաստեղ 2003, 291): 1925 թ. մարտի 25-ի նամակում գրողն անկեղծորեն խոստովանում է, որ «Դեմքեր»-ը պատճառ է դարձել հայ հեղինակներից մի քանիսի երկերի «կրկին ու այս անգամ լուրջ ընթերցանութեան» (Համաստեղ 2003, 291):

Տարիներ անց Համաստեղը Չոպանյանի հուշումով կարդաց, ճանաչեց ու արժևորեց «Նորեյլան» մրցանակի դափնեկիր (1904 թ.) Ֆրեդերիկ Միստրալի (1830–1914) գրական աշխարհը, հատկապես «Միրեյո» (1859) պոեմը (Միստրալ 1905): 1930 թ. սեպտեմբերի 7-ի նամակում Համաստեղը պատմում է, որ տարիներ առաջ Բոստոնի գրադարանում գտել է «Միրեյո»-ի անգլերեն թարգմանությունը, և «Օրական մէկ էջ միայն կարդացեր եմ այն երկիրով, որ կը հատնի յանկարծ» (Համաստեղ 2003, 293): Ա. Չոպանյանը պատասխան նամակում (1930 թ. հոկտեմբեր 27) հույս է հայտնում. ««Միրեյո»-ն կարդացէք ու մեզի հայկական «Միրեյո» մը գրեցէք» (Համաստեղ 2003, 188–189): Չոպանյանի ցանկությունն այդպես էլ ...մնաց ցանկություն. հայությանն անհանգստացնող խնդիրները

շատ հեռու էին հովվերգական պատկերներից, իսկ աշխարհն ու մարդկությունը խելահեղ թափով ընթանում էին դեպի նոր համաշխարհային պատերազմ:

Համաստեղի և Արշակ Չոպանյանի նամակագրության հետաքրքիր դրվագներից է 1938-ին Բոստոնում լույս տեսած «Բարջանճ գյուղ. Համայնապատում (1600–1937)» հատորի առաջաբանի խնդիրը, որի հեղինակը Չոպանյանն էր, և խմբագիր Մանուկ Ծերոնյանին (1862–1938) «առնչուող կնճիռները հարթում էր» Համաստեղը: Այսպես՝ 1938 թ. մարտի 10-ին Համաստեղը գրել է, որ գրքի առաջաբանի մի քանի տողում «ինչ-ինչ, հեռաւոր կամ մօտաւոր կուսակցական բնոյթ նկատուած է», ու հավելում. «դժուար եղաւ առարկողներուն խօսք հասկցնել» (Համաստեղ 2003, 294): Ծերոնյանը գրքի առաջաբանում նշում է, որ «շատ խնամոտ հետազօտութենէ մը վերջ» Համաստեղի ծննդավայրի *Բարջանճ* հայեցի ձևը քննարկել է «մեծանուն գրագէտ պարոն Արշակ Չոպանեանի եւ Վենետիկի միաբանութենէն հանրաճանօթ բանասէր, ազգագրագէտ, Մխիթարեան միաբանութեան անդամ Հայր Վարդան Հացունիի հետ» (Սոմունճյան, 1870–1944) («Բարջանճ գիւղ» 1938, 14): Նա բացատրում է. «Գիւղին շատ հին եւ անվաւերանալի ասանդութեան մը համեմատ՝ առաջին անունը *Բարեջան* է եղեր, երբ Թադէոս-Բարթօղիմէոս առաքեալներ առաջին մատուռ-եկեղեցին կառուցին գիւղին մէջ» («Բարջանճ գիւղ» 1938, 21):

«Գյուղը» և «Անձրև» ժողովածուների քննության փորձեր

«Գյուղը» ժողովածուի քննությանը նվիրված բազմաթիվ հոդվածներում [Հակոբ Օշական (Քյուֆեճյան, 1893–1948), Դավիթ Անանուն (Տեր-Դանիելյան, 1879–1942), Հայկ Հովակիմյան (1897–1938), Ռուբեն Դարբինյան (Արտաշես Չիլինգարյան, 1883–1968), Ավետիս Ահարոնյան (1866–1948) և այլք] կրկնվում էին նույն տագնապը՝ ամերիկյան միջավայրում հայ գրողի բնատուր շնորհը կգունագրկվի, և նույն մաղթանքը՝ Համաստեղը պիտի տեղափոխվի Հայաստան: «Համաստեղ և գյուղը հայ գրականության մեջ» ծավալուն ուսումնասիրության մեջ Ա. Չոպանյանը «Գյուղը» անվանում է «իր տեսակի մեջ առաջնակարգ գործ մը, ուր անթերի գեղեցկությամբ ու հազվագյուտ ինքնատիպությամբ ոճ մը երևան կու գա» (Չոպանյան 1988, 759):

Չոպանյանն Ալեքսանդր Շիրվանզադեից (Մովսիսյան, 1858–1935) հետո Համաստեղին է համարում «ամենն ճշմարիտ ու կատարյալ իրապաշտը» (Չոպանյան 1988, 762), որը կերտել է «գրքի էջերն դուրս» ապրող կերպարներ, պատկերել կենդանիների «ներաշխարհը», «ապրումները»: Քննելով ժողովածուի առնչությունները հայ դասական գրականության և հատկապես Խաչատուր Աբովյանի (1809–1848), Հովհաննես Թումանյանի (1869–1923), Թվկատինցու (Հովհաննես Հարությունյան, 1860–1915), Ռուբեն Չարդարյանի (1874–1915) գրական ժառանգության հետ՝ Չոպանյանը Համաստեղի արձակը *նորություն* է անվանում և հավելում, որ «հայաշունչ ու հայագույն» մեծածավալ գործ գրելու համար «Համաստեղ Հայաստան երթալու է. այդ հայ հողի ծաղիկներով հորինված երանգապանակն ունեցող թանկագին արվեստագետը պետք չէ ձգել, որ ա-

մերիկյան գործարաններուն մուխին մեջ չդժգունի. Հայաստան է իր տեղը» (Չոպանյան 1988, 765):

Չոպանյանն առաջիններից մեկն էր, որ սփյուռքի հայ գրականությունը դիտարկեց որպես մայր երկրի գրականության անբաժանելի մաս: Ամենամեծ ձեռքբերումը «Հայ Տէրութեան մը» գոյության փաստն էր, իսկ գերխնդիրը՝ ազգային մշակույթը վառ պահելը: «Հայաստանի եւ արտասահմանի գրական արտադրութեանց կրկնակ շարքը պիտի ըլլայ ուրեմն իրար ամբողջացնող գոյգ մը ճիգ, որմէ մեր ազգային գրականութիւնը իր ընդհանրութեան մէջ պիտի օգտուի» (Չոպանեան 1926, 12), – եզրակացնում է նա: Հայ գրականության խոր ու բազմակողմանի իմացությամբ աչքի ընկնող քննադատը պնդում էր՝ «հայ շեշտ ու գոյն ունեցող» գրականության հաղթանակն անխուսափելի է, ինչքան էլ զորեղ ու անհաղթահարելի թվան գաղափարական-կուսակցական պատնէշները:

Սփյուռքի հայ գրականության խոշոր դեմքերից երեքը՝ Համաստեղը, Վահե Հայկը (Տինճյան, 1896–1983), Բենիամին Նուրիկյանը (1894–1988), խարբերոցի էին, շարունակում էին Թլկատինցու ավանդները, որին Չոպանյանն անվանում էր հայ ժողովրդի «պանծալի մեծութիւններէն և իր անթառամ սրբութիւններէն» (Թլկատինցին եւ իր գործը 1927, ԿԱ): Համաստեղը ոչ միայն անմահացնում էր կորցրած Բնօրրանի հիշատակները, այլև ճանապարհ էր հարթում գրական նոր արժեքների, նոր դեմքերի համար, և «Գյուղը» ժողովածուն յուրատեսակ ժամանակագրական կարգ էր հաստատում, մի կողմից՝ հայ դասականների, մյուս կողմից՝ նոր ժամանակներում, անծանոթ ու խորթ պայմաններում ստեղծագործող հայ գրողների միջև:

Գրականագետ Ժենյա Քալանթարյանը գրում է. «Իր հենց առաջին՝ «Գյուղը» ժողովածուով Համաստեղն այնպիսի համարում է ձեռք բերում Չոպանյանի համար, որ վերջինս նրան մտցնում է հայ տաղանդավոր, արդեն հայտնի գրողների շարքը և հաճախ նոր լոյս տեսած գրքերի մասին խոսում է՝ չափանիշ ունենալով Համաստեղի արվեստը» (Քալանթարյան 1989, 29):

Հակոբ Խաչմանյանի (1888–1968) կազմած «Ամերիկահայ հանրագիտակի» առաջին գրքում տպագրված է «Գյուղը» ժողովածուի հայտագիրը, որից մեջբերում են մի հատված. «Գիրն ու գրականութիւնը սիրող ոչ մէկ Հայու ներելի է չունենալ ու չկարդալ Համաստեղի «Գիւղը»:

Երիտասարդ գրագէտի այս անդրանիկ գործը՝ լոյս ու յոյս տուող սքանչելի յայտնութիւն մըն է մեր այսօրուան ու վաղուան գրականութեան համար:

Եթէ հեղինակը թոյլ տար մեզ՝ իրեն ու բարեկամներուն եկած նամակներէն մէջբերումներ ընելու, պիտի պարզուէր, թէ զմայլումի ու գնահատութեան որպիսի ինքնայորդ արտայայտութիւններ ունեցած են իր մասին Ա. Ահարոնեան, Հ.Ա. Ղազիկեան, Զ. Եսաեան, Ա. Չօպանեան, Ա. Իսահակեան, Յ. Օշական և դեռ այնքան շատեր՝ հիններէն ու նորերէն» (Ամերիկահայ հանրագիտակ 1925, 20):

Համաստեղ գրողը եվրոպական երկրների հայ ընթերցողին գրեթե հայտնի չէր. գրողներն էին կարդացել ու գրախոսել «Գյուղը» հատորը: Իրավիճակը կարելի էր շտկել ժողովածուն Եվրոպայում վերահրատարակելով, բայց նա 1929-ին

Փարիզում հրատարակեց պատմվածքների նոր ժողովածու՝ «Անձրև»-ը: Ինչպես երևում է Սիմոն Վրացյանի (Գրուզինյան, 1882–1969) և մյուսների հետ Համաստեղի նամակագրությունից, պատմվածքների այս ժողովածուի տպաքանակի՝ գրողին հասանելիք մասը չանցավ օվկիանոսը, և «Անձրև»-ը գրեթե անձանոթ մնաց ամերիկաբնակ հայ ընթերցողին: Համաստեղը Խորհրդային Հայաստան է ուղարկել այս երկու ժողովածուների տասնյակ օրինակներ, որոնք պահվում են Հայաստանի ազգային (այն տարիներին՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրային) գրադարանում:

«Անձրև» ժողովածուի հրատարակությունից հետո ավելի էր սրվել գրական վեճը, որի սկիզբը Հրանտ Բալույանի (1904–1967) հոդվածն էր «Ձվարթնոց» հանդեսում (Չուարթնոց 1929, N 2): Նա «Անձրև»-ը համարում էր «Գյուղը» ժողովածուի կրկնություն՝ «սկսած տպագրության ձևէն մինչև աքլորին կանչը, մինչև երդիքը շարուած դղումները, եւ, ինչպէս միշտ, այս անգամ ալ կը խայտան պառաւցած ճաշակներ»: Չհամաձայնելով Համաստեղին գրական նոր սերնդի «առաջապահը կամ ամենէն կատարեալը» համարողների (ուրեմն՝ նաև Չոպանյանի – Մ.Խ.) հետ՝ Հրանտ Բալույանը նշում է. «Եւ արդէն ինչ կարելի է սպասել գիւղի միամիտ ու միօրինակ շրջապատէն, որուն պատկերացումին համար հեղինակը պիտի քալէ դէպի իրապաշտութիւն: Այդ իրապաշտութիւնը գրեթէ դուրս է արուեստի սահմանէն» (Չուարթնոց 1929, N 2):

Սրան հավելում է՝ «Համաստեղի ենթահողը ճղճիմ է», գրողը «երեւակայութիւն չունի», «կը հաւատայ, թէ անհատը, որ կը լքէ հողն ու արօրը, անպայման կ'ենթարկուի քայքայման», պատմվածքները «միօրինակ են» (Չուարթնոց 1929, N 2): «Գիւղը թռիչք չի տար գրողին» (Չուարթնոց 1929, N 2), – եզրակացնում է Բալույանը: Այսուհանդերձ, նա ստիպված է արձանագրել. «Արժանիք մը՝ իր ինքնատիպ պատկերները» (Չուարթնոց 1929, N 2): Բալույանը Շավարշ Նարդունու (Ասքանազ Այվազյան, 1898–1968), Վահրամ Կաքավյանի (1903–1973), Եղիշե Այվազյանի (1890–1993) անունների թվարկումով փորձում է ապացուցել, թե «գաւառի գրականութեան» մայրամուտն անխուսափելի է, իսկ Համաստեղն ուշացել է, այլ խոսքով՝ ժամանակավրեպ է:

Ժամանակն ապացուցեց ճիշտ հակառակը:

Սիյուրքի հայ գրականության այս թեմատիկ որոնումները ոչ միայն «գյուղ թե՞ քաղաք» խնդրի, այլև գրականության ապագայի հարցի շատ լուրջ քննարկումների հնարավորություններ էին:

«Ձվարթնոց» հանդեսի 1929 թ. 1-ին համարում տպագրված է Չոպանյանի «Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ» հոդվածը, որով սկսված լայն քննարկմանը մասնակցել է նաև Կոստան Զարյանը (Եղիազարյան, 1885–1965): Նա դժգոհում է, որ «գաւառական գրականութիւն են պահանջում», այնինչ «հայ միտքը վերջապէս կանգնել է ամբողջ համաշխարհային կեանքի առջեւ», ընդգծում, որ հայ գրականության համար «ինքնայատուկ իր խօսքը ասելու», «յանդգնութիւնը ունենալու, քանդելու եւ կառուցանելու» (Չուարթնոց 1929, N 3) պահն է եկել: Ուրեմն՝ «Հայ խօսքով եւ Հայի ծայնով խօսել Տիեզերքի հետ»

(Զուարթնոց 1929, N 3): Իսկ թե գավառի գրականությունը ինչն՞ է չէր կարող բավարարել այդ չափանիշները, Շահան Շահնուրը (Քերեսթեճյան, 1903–1974) մեկնաբանում էր այսպես. «Այս վերջին տարիներու Ազգային գրագետի տիտղոսը տրվեցավ հեղինակի մը, որ իր պատմվածքներուն նյութը կքաղէ զուտ գավառական կյանքէ: Անշու՛շտ թե արժեքավոր գրագետ մըն է այդ նորը (Համաստեղը – Մ.Խ.), բայց ազգայնամոլ լրագրողներու կողմէ ընտրված վերոհիշյալ մակդիրը ծիծաղելի է պարզապէս: Միթե Հայ չե՞ն, ազգային չե՞ն քաղքենիները (քաղաքաբնակները – Մ.Խ.):»

Պատահեցավ ավելին: Շուտով արձակվեցավ հետևյալ պատգամը. «Պետք է գյուղի մասին գրել, տարագիրներուս մեջ վառ պահելու համար հայությունը»» (Շահնուր 1985, 108):

Շահնուրը, անշուշտ, չափազանցում էր. գյուղի թեման չէր կարող պարտադրվել այն պարզ պատճառով, որ XX դարակազմի հայ գրողները բոլորը ծագումով գյուղից չէին, եթե մի պահ մոռանանք զուգահեռ հարցերն ու խնդիրները: Հովհաննես Ավագյանին (1882–1959) հասցեագրած նամակում Համաստեղը գրում է. ««Գիւղագիր» որակումը Փարիզի մեր նորելուկ աքաղաղներէն դուրս եկաւ: Անոնք, որոնք ուզեցին նորէն ֆրանսական ձեւերը ընդօրինակել ու հայ արժէքներուն վրայ վերէն նայել: Այդ հին ցաւ է եւ գաղութահայ գրականութեան յատուկ մեկ հիւանդ հոգեբանութիւնը: Թլկատինցիի եւ Զարդարեանի օրով չկար այդ բառը, որովհետեւ այն օրերուն անոնց արժէքը ըմբռնողներն աւելի պատրաստուած եւ լուրջ գրեգէտներ էին ու չափով մը միայն հասկցան, որ հայ ժողովուրդը, Հայաստանը գաւառ է ու գիւղ» (Համաստեղ 2003, 76):

«Հայրենիք» օրաթերթի՝ 1929 թ. հուլիսի 10-ի համարում «Ապագա» թերթից արտատպված է Ա. Չոպանյանի «Համաստեղի «Անձրև»-ը» հոդվածը: Գրողի՝ «հայ գիւղէն ներշնչուած հիւթալից գրականութեան» շարունակությունը Չոպանյանն անվանում է «կեանքի զուտ իրապաշտ, առարկայական ներկայացման աղուոր ու առողջ» ուղղության արտահայտություն: Քննադատը Համաստեղի ոճի բաղադրիչները [«պատմելու սիրուն եղանակ», «փափուկ ու խանդաղատալից քնարերգութիւն մը, գաւառական միամիտ, ինքնատիպ երգիծաբանութեամբ մը խառն ամուր, յստակ լեզու» (Չոպանեան 1929)] թվարկելուց հետո եզրակացնում է. «Գիւղը եղած է եւ միշտ պիտի մնայ մարդկային ընկերութեան հիմքը, քաղաքակրթութեան ամէնէն էական ու առողջ տարրերուն արմատը» (Չոպանեան 1929):

Նա վերլուծում է «Անձրև» ժողովածուի մի քանի «կատարեալ պատմուածքները», որոնցից առանձնացնում է «Համբույրը»՝ «հրաշակերտ մը», «որ ցոյց կու տայ, թէ Համաստեղ, երբ լաւ ներշնչուած է ու իր արուեստագետի աչքով կը վերաքննէ, կը դատէ, կը յղկէ ու կը շարադրէ գիւղի կեանքէ առնուած նիւթ մը, կը հասնի այդ ճիւղին մէջ միջազգային համբաւ ունեցող վարպետներու կատարելութեան» (Չոպանեան 1929): Նա առանձին ուշադրություն է նվիրում գրքի չափածո պատմվածքներին: «Համաստեղ արդէն իսկ բանաստեղծ է իր նկարագրութեանց, կեանքի տեսիլներէ ոմանց արտայայտութեան եւ իր ոճին ինչ-ինչ

մասերուն մէջ ու թերեւս ասելի խորապէս բանաստեղծ՝ այդ արձակով, քան թէ ոտանաւորով» (Չոպանեան 1929, 10 հուլիսի), – գրում է Չոպանյանը: Նա «սիրուն քմայքով ու գթացող սրամտութեամբ մը գրուած մեծագոյն նորութիւն և հզորագոյն էջ» է անվանում «Ջրույց շունի մը հետ»-ը, «ուր Համաստեղ հայ ողբերգութեան վերջին ահաւորագոյն դրուագին տեսիլն ուզած է արտայայտել, նորէն գիւղին մէջէն է որ կը տեսնէ Համաստեղ աղէտը, բայց հոն իր շունչը լայնցած, ոճը թռիչք առած է, հոն գրական բարձրագոյն ոլորտին հասած է ան, ասիկա գիւղէ ներշնչուած գրականութիւն չէ այլևս, այլ արուեստագէտ հայրենասէրի էջ մը, գեղեցկագոյններէն եւ հզորագոյններէն, որ մեր մէջ նուիրուած ըլլան այդ քստմնելի (ահռելի – Մ.Խ.) եւ սրբազան նիւթին» (Չոպանեան 1929):

Ժամանակը հաստատեց գավառական գրականության արժեքների անմահությունը. չէ՞ որ «Գյուղը հիմնական բջիջն է ժողովրդի մը ազգային ինքնության» (Չոպանյան 1988, 745), ավելին՝ «Այսուփանդերձ, գիւղը ներկայացնել որպէս փոքրիկ դրախտ եւ քաղաքը՝ դժոխային Բաբելոն, բոլորովին զուրկ չէ ճշմարտութենէ» (Շահնուր 1958, 92): Շահնուրի բնորոշմամբ՝ բոլորի, մանավանդ «հիմնական ճշմարտութիւններն» անտեսող գրողների հետ «գեշ կատակներ» (Շահնուր 1958, 91) խաղացող գիրը՝ գրականությունը, հակառակ ողբերգական կանխատեսումների, մնաց ու հաստատեց գոյության իր իրավունքը՝ «գավառական» որակումը փոխելով «սփյուռքի հայի»: Պատճառը հողի ու հողագործի պաշտամունքն է, որ վեր է ազգային նեղ շրջանակներից, հասնում է բոլոր դարերում ազգային գրականությունների մէջ (ինչ անուն կամ ինչ ուղղություն էլ դրանք ունենան) միշտ փնտրված ու փնտրվող Մարդու իդեալին:

Ճշմարտությունն այն է, որ հայության արմատներն առավել կենսունակ են գյուղում, իսկ ազգային արժեքների փնտրտուքը նոր պայմաններում առնչվում է նաև անցյալին: Հակոբ Մնձուրին (Տեմիրճյան, 1886–1978) գրում է. «Իրաւ մը պատմելը գրականութիւն չէ արդէն: Գրականութիւնը ստեղծագործութիւն մըն է ամենէն առաջ, կամ գեղեցիկ սուտեր հղանալ ու պատմել մըն է: Կը բաւէ, որ իրաւէն շինուին ու ճշմարտանման ըլլան» (Սփիւռքահայ արդի գրականութիւն վերջին կէս դարու: Հատընտիր բանաստեղծութիւններ և պատմուածքներ 1994, 394): Սա արմատից յաթաղանահար եղած հայ ժողովրդի բեկորներին ապրելու, գոյատևելու հույս ներշնչելու ճակատագիրն ու պատմական առաքելությունն ունեցող Սփյուռքի հայ գրականության բանալիներից է, որը ժամանակակիցներից շատերի համար անտեսանելի էր կամ անմատչելի:

Տասնամյակներ անց Համաստեղի «Գյուղը» և «Անձրև» ժողովածուները դիտարկվում են որպէս հայ դասական գրականության նվաճումներ, իսկ առավել սթափ, եվրոպական, հատկապէս ֆրանսիական ձևամոլությունը մերժող Արշակ Չոպանյանն այդ մասին խոսում է ավելի վաղ:

Վերընթերցելով Համաստեղի և Արշակ Չոպանյանի գրական ժառանգությունը՝ կարող ենք շտկել նաև մեր թույլ տված սխալները: Այս նշանավոր հայերն իրենց կյանքով, անբասիր նկարագրով ու թողած հարուստ գրական ժառան-

գությամբ ցայսօր ծառայում են ողջ հայությանը: Նրանց համար Հայաստանից վեր ոչինչ չկար, չէր կարող լինել:

Եզրակացություններ

1. Համաստեղի «Գյուղը» հատորը Սփյուռքի հայ գրականության պատմության բացառիկ գրական-պատմական փաստերից է:

2. Հայրենի Բնօրրանի կենդանի հիշատակների հավերժացումը գրականության մեջ օգնում էր հայության՝ օտար ափերում մարդ, հայ մնալու ամենօրյա ջանքերին ու ճիգերին:

3. «Գյուղ թե՛ քաղաք» բանավեճը սոսկ թեմատիկ որոնումների խնդիր չէր, այլև՝ ազգային, մարդկային դիմագծերը պահպանելու հնարավորությունների որոնում ոչ միայն գրականության մեջ:

4. Համաստեղն ու Արշակ Չոպանյանն անվարան խոսում էին նաև մեր սխալների մասին՝ հուսալով, որ կուղղենք դրանք, ավելի վստահ կընթանանք մեր իրավունքները, պատմությունը և մշակույթը պաշտպանելու ճանապարհով:

Շնորհակալական

Այս հոդվածի համար նյութեր հավաքելիս համագործակցել եմ Հայաստանի Ազգային գրադարանի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի աշխատակիցների հետ, խորհրդակցել բանասիրական գիտությունների թեկնածու Նաիրա Բալայանի հետ, որը երկար տարիներ զբաղվում է Արշակ Չոպանյանի գրական ժառանգությամբ: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում նրան:

Գրականություն/References/Литература

1. Ամերիկահայ հանրագիտակ 1925, տարեգիրք, կազմող եւ հրատարակիչ՝ Յակոբ Խաչմանեան, Նիւ Եորք, Բոստոն, «Հայրենիք»:
American Armenian Encyclopedia 1925, Yearbook, compiler and publisher: Hakob Khashmanian, New York, Boston, Hairenik (in Armenian).
2. Անահիտ ամսագիր 1930, N 1, Փարիզ, 80–86:
Anahid magazine 1930, N 1, Paris, 80–86 (in Armenian).
3. Բարջանճ գիւղ: Համայնապատում (1600–1937) 1938, կազմեց Մանուկ Պ. Ծերոն (առաջաբանը՝ Արշակ Չոպանեանի), Բոստոն, «Պայքար»:
Parchandj Gyugh: A Folktale (1600–1937) 1938, compiled by Manuk P. Tsero (foreword by Arshak Chohanian), Boston, Paikar (in Armenian).
4. Չուարթնոց ամսագիր 1929, N 1–3 և N 6, Փարիզ:
Zuartnots magazine 1929, N 1–3 and N 6, Paris (in Armenian).
5. Թլկատինցին եւ իր գործը 1927, առաջաբանը՝ Արշակ Չոպանեանի, Բոստոն, «Պայքար»:
Tikatintsi and His Work 1927, foreword by A. Chohanian, Boston, Paikar (in Armenian).

6. Համաստեղ 2003, Նամականի (ընագիրը, ծանոթագրությունները և առաջաբանը Մ. Խաչատրյանի, Երևան, «Մուղնի»:
Hamastegh 2003, Letter (Original, Notes and Preface by M. Khachatryan), Yerevan, Mughni (in Armenian).
7. Միսթրալ Ֆրենտերիք 1905, Միրէյո (Փրովանսական քերթում) [Քննական ուսումնասիրութեամբ մը թարգմանեց Արշակ Չոպանեան], Թիֆլիս, «Քութաթելիճէ» տպարան, Յաւելլում «Լումա» ամսագրի:
Mistral Frédéric 1905, Mireille (Provençal literary work) [Translation with Critical Study by A. Chopanyan], Tbilisi, Kutatelidze Printing House, Supplement to Luma Magazine (in Armenian).
8. Յիսնամեայ յորելեան Համաստեղի գրական գործունէութեան (1895–1966) 1966, Նիւ Եորք, հրատ. նշված չէ:
Fiftieth Anniversary of Hamasteghi's Literary Activity (1895–1966) 1966, New York, Publisher not indicated (in Armenian).
9. Շահնուր Շ. 1958, Թերթիս կիրակնօրեայ համարը, Պէյրութ, Գրիգոր Քէօսեանի հրատ.:
Shahnur Sh. 1958, Sunday Issue of My Newspaper, Beirut, Grigor Keosian (in Armenian).
10. Շահնուր Շ. 1985, Երկեր 2 գրքով, «Սովետական գրող», գիրք 2, Երևան:
Shahnur Sh. 1985, Works in 2 Books, Soviet Writer, Book 2, Yerevan (in Armenian).
11. Չոպանեան Ա. 1926, Մեր գրականութիւնը, Փարիզ, տպ. Յ. Պօղոսեանի:
Chopanyan A. 1926, Our Literature, Paris, Y. Boghossian Print (in Armenian).
12. Չոպանեան Ա. 1929, «Համաստեղի «Անձրեւ»-ը», «Հայրենիք», 10 յուլիսի:
Chopanyan A. 1929, Hamastegh's "Rain", Hairenik, July 10 (in Armenian).
13. Չոպանյան Ա. 1988, Երկեր, Երևան, «Սովետական գրող»:
Chopanyan A. 1988, Works, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).
14. Սփիւռքահայ արդի գրականութիւն վերջին կէս դարու: Հատընտիր բանաստեղծութիւններ եւ պատմածքներ (Պոստահայ գրականութիւն) 1994, հ. Ա, Միչիկըն, «Ռօյըլ Օք»:
Diaspora Armenian Modern Literature of the Last Half Century. Selected Poems and Stories (Istanbul Armenian Literature) 1994, vol. A, Michigan, Royal Oak (in Armenian).
15. Քալանթարյան Ժ. 1989, Արշակ Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, Բանբեր Երևանի համալսարանի, N 3, 26–36:
Kalantaryan Zh. 1989, Arshak Chobanyan as a Critic of Diaspora Armenian Literature, Bulletin of Yerevan University, N 3, 26–36 (in Armenian).